



ՄԷԿ ԿԱՂՐ

ԿԱՐՃ ՖԻԼՄԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

Հունիս, Երևան

ԱՆՎԱՆԱԿԱՐԳԵՐ

ՄԷԿ ԿԱՂՐ ՄԷԿ ՐՈՊԵ

1. Ներկայացվող ֆիլմի տևողությունը առանց տիտրերի պետք է լինի մեկ ռոպե (60 վրկ.):
2. Ֆիլմը սահմանափակվում է մեկ կադրում, բացառվում է համակարգչային մոնտաժի միջոցով երկու տարբեր կադրերի համադրումը մեկի մեջ:
3. Անիմացիոն ֆիլմերում բազմակադր գործողությունը չի դիտարկվում որպես մեկ կադր պայմանի խախտում: Արգելվում է բազմապլան անցումներով ուղղակի մոնտաժը:
4. Բնագրերը (տիտրեր)՝ մեկ ռոպե աշխատանքից դուրս. կադրի սկզբում՝ 10 վրկ. տևողությամբ:
5. Հեղինակային հայացքների, ժանրի, ձևի, կրիչի սահմանափակումներ չկան:

ԿԱՐՃ ՖԻԼՄԵՐ

1. Մինչև 30 ռոպե ֆիլմեր /անիմացիոն ֆիլմեր այս անվանակարգում չեն ընդունվում/:
2. Կրիչի սահմանափակումներ չկան:

ԿԻՆՈ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆԻ

Փառատոնի միակ տարածքը, որտեղ հնարավոր է ներկայացնել լիամետրաժ ֆիլմեր, կինոնորարարություն, ՈՒՐԻՇ ԿԻՆՈ:

* Հատուկ ուշադրության են արժանանում մարդու իրավունքների պաշտպանությանը անդրադարձող ֆիլմերը:

ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳՐԵՐ

Կարող են ներկայացվել անհատների, փառատոների կամ նախագծերի կողմից:

Հայտերի ընդունման կարգը

Փառատոնում առկա է մշտական բաց հայտագրումը, առանց մուտքավճարի:

Ներկայացվող ֆիլմում պարտադիր պետք է նշված լինի ֆիլմի և ռեժիսորի անունը, արտադրության տարեթիվը: Ֆիլմը պետք է ունենա անգլերեն ենթագրեր:

Ներկայացված ֆիլմերը պետք է ավարտված լինեն փառատոնից առավելագույնը 2 տարի առաջ:

Ցուցադրման ֆորմատ

Նյութը պետք է ունենա ցուցադրելի որակ, հնչունային կամ ձայնային խոտան ունեցող ֆիլմերը չեն ցուցադրվում: Հայտագրման համար չեն ընդունվում նախօրինակներ կամ գովազդային օրինակներ:

Փոստային առաքում

Ընդունվում են DVD-ներ փառատոնի նշված հասցեով, ինչպես նաև առձեռն կամ ինտերնետ անվճար շերինգ ծառայությունների միջոցով (sharing): Հայաստանից դուրս փառատոնին ուղարկված փաթեթները պետք է ունենան՝ Մշակութային նպատակներով, առևտրային արժեք չունեցող նշումը (For temporary, cultural purposes only. No commercial value): CD/DVD-ներ չեն վերադարձվում, փառատոնին ներկայացնել միայն կրկնօրինակները: Առաքման ընթացքում կորած փաթեթների համար փառատոնը պատասխանատվություն չի կրում:

Որոշումներ

Փառատոնի ընտրում է ֆիլմեր ըստ ներկայացված անվանակարգերի: Փառատոնը պարտավոր է ֆիլմը չընտրելու դեպքում տեղեկացնել հայտագրվողին մինչև փառատոնի պաշտոնական բացումը: Փառատոնից հետո, ֆիլմերը ընդգրկվում են փառատոնի կինոդարանում և կարող են ցուցադրվել շահույթ չհետապնդող ներկայացուցչական ցուցադրություններում:

Հեղինակային իրավունքներ

Հեղինակը հաստատում է, որ ներկայացված աշխատանքում չի խախտվում Յրդ կողմի հեղինակային իրավունքը: Հեղինակային իրավունքների որևէ խախտման դեպքում փառատոնը պատասխանատվություն չի կրում:

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

ԳԼԽԱՎՈՐ ԺՅՈՒՐԻ

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱԴՐ - արձանիկ, տրվում է «ՄԷԿ ԿԱԴՐ ՄԷԿ ՐՈՊԵ» լավագույն ֆիլմին
ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԷԿ ԿԱԴՐ ՄԷԿ ՐՈՊԵ - արձանիկ, դրամային մրցանակ՝ 100000 դրամ, ՀԱՏՈՒԿ ՀԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐ

ԿԱՐՃ ՖԻԼՄԵՐԻ ԺՅՈՒՐԻ

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖԻԼՄ - արձանիկ, տրվում է լավագույն ֆիլմին
ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՃ ՖԻԼՄ - արձանիկ, դրամային մրցանակ՝ 200000 դրամ, ՀԱՏՈՒԿ ՀԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐ

ԿԻՆՈ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆԻ

ՓԱՌԱՏՈՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿ - արձանիկ:

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ - արձանիկ,

Տրվում է հայկական կինոարտադրության առաջընթացին ակնառու ներդրում բերած անհատին: «ՄԷԿ ԿԱԴՐ» ԿՖՄՓ

Նորարար Փորձառական Արվեստի Կենտրոն

Փավստոս Բյուզանդի 1/3, 0010 Երևան, Հայաստան, Գազիկ Ղազարի

T: (+37410) 568225, W: www.accea.info E: kadrrupe@gmail.com